

**ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻ ԵՎ ՍՓՅՈՒՌԱՅԱՅ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ
(2020-21 ուսումնական տարի)**

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ ԿԳՄՍ նախարարություն), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա պետություններում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների ընդունելության կարգը հաստատելու մասին» N 700-Ն և ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը հաստատելու մասին» N 1295-Ն որոշումները, սկսում է օտարերկրացի և սփյուռքահայ դիմորդների փաստաթղթերի ընդունումը՝ 2020-2021 ուսումնական տարում ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունվելու համար:

Օտարերկրյա քաղաքացիները՝ սփյուռքահայ և օտարազգի դիմորդները փաստաթղթերն առցանց պետք է ներկայացնեն ԿԳՄՍ նախարարություն հետևյալ ժամկետներում՝
 → անվճար առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով սփյուռքահայ դիմորդների ընդունելության համար.

2020թվականի **հուլիսի 13-ից մինչև օգոստոսի 25-ը** ներառյալ.
 → վճարովի առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ուսանելու համար.

2020 թվականի **հուլիսի 13-ից մինչև սեպտեմբերի 25-ը** ներառյալ,
 → վճարովի առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով ուսանելու համար.

2020 թվականի **հուլիսի 13-ից մինչև հոկտեմբերի 9-ը** ներառյալ,
 → վճարովի հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսանելու համար.

2020 թվականի **հուլիսի 13-ից մինչև հոկտեմբերի 16-ը** ներառյալ,
 → վճարովի հետբուհական՝ ասպիրանտի կրթական ծրագրով ուսանելու համար.

2020 թվականի **հուլիսի 13ից մինչև դեկտեմբերի 10-ը** ներառյալ,
 → վճարովի առկա ուսուցմամբ նախնական մասնագիտական (արհեստագործական) և վճարովի առկա ուսուցմամբ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանելու համար.

2020 թվականի **հուլիսի 13-ից մինչև օգոստոսի 25-ը** ներառյալ,
 → հեռակա ուսուցմամբ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանելու համար

2020 թվականի **հուլիսի 13-ից մինչև նոյեմբերի 20 -ը** ներառյալ,
 → վճարովի առկա ուսուցմամբ նախապատրաստական բաժանմունքում ուսանելու համար
 2020 թվականի **հուլիսի 13-ից մինչև նոյեմբերի 30-ը** ներառյալ:

Փաստաթղթերն առցանց ԿԳՄՍ նախարարություն ներկայացվում են՝
– դիմորդի կողմից անձամբ կամ նրա լիազորված անձի կողմից
– բարձրագույն ուսումնական հաստատության կողմից,
– օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով.

- Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը
1. Դիմում համաձայն կից ներկայացված ձևի,
 2. Դիմում-հարցաթերթիկ՝ համաձայն կից ներկայացված ձևի,
 3. բժշկական տեղեկանք՝ ընդհանուր առողջական վիճակի մասին (սույն տեղեկանքը կարող է տրված լինել նաև Հայաստանի Հանրապետության բժշկական կազմակերպությունների կողմից),
 4. անձնագրի պատճեն,
 5. սփյուռքահայ դիմորդների համար՝ ծննդյան վկայականի պատճեն՝ նոտարով վավերացված կամ մկրտության վկայականի պատճեն,
 6. կրթական աստիճանի վերաբերյալ ավարտական փաստաթղթի պատճենը (գնահատականներով)՝ թարգմանված և նոտարական, իսկ առանձին երկրների դեպքում՝ նաև միջազգային վավերացմամբ (ապոստիլ),
 7. 3x4 չափսի 1 լուսանկար,
 8. ինքնակենսագրություն (CV)՝ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով,
 9. հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու համար՝ ընտրած մասնագիտության թեմայով գիտական ռեֆերատ՝ 20 էջի սահմաններում, հայերենով, ռուսերենով կամ անգլերենով:

Դիմորդները է վերոնշյալ 1-9-րդ կետերով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետներում պետք է ներկայացնեն առցանց՝ ԿԳՄՍ նախարարության secretariat@escs.am, info@escs.am էլեկտրոնային հասցեին:

Գիտելիքների գնահատման ընթացքում դիմորդները պարտավոր են 1-9-րդ կետերով պահանջվող փաստաթղթերի բնօրինակները ներկայացնել ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչություն կամ տվյալ ուսումնական հաստատություն: Հաշվի առնելով նոր տիպի կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված համաճարակային իրավիճակը, սփյուռքահայ և օտարերկրյա դիմորդների գիտելիքների ստուգման ժամանակացույցը կարող է փոփոխվել: Լրացուցիչ տեղեկությունների համար կարելի է դիմել ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության հետևյալ բաժիններին՝
– սփյուռքի հետ կապերի բաժին (հեռ.+374 10-599-647)
– արտաքին կապերի բաժին (հեռ.+374 10-599-646)